



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԳԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Է. Գրիգորյան

12 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 100

Ձեռնարկողը՝

<<Հայնախագիծ>> ԲԲԸ
Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

Արարատի տարածաշրջանի (Արարատ-7, Արարատ-8, Արարատ-9) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածային պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվեկշիռություն
Արարատի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 100

<14> 12 2018թ.

Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի (Արարատ-7, Արարատ-8, Արարատ-9) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքային պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ <<Հայնախագիծ>> ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝ ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն
Փաստաթղթի տեսակը՝ Հիմնադրությամբ փաստաթուղթ
Իրականացման վայրը՝ Արարատի մարզի Արարատ և Վեդի քաղաքներ, 27 գյուղական համայնքներ

Արարատի տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (այսուհետ՝ ՄՄՀՏՊՓ) ներառված են.

- «Արարատ-7» Արարատ, Ավշար, Այգավան, Ոսկետապ, Արմաշ, Նոյակերտ, Սուրենավան, Երասխ, Եղեգնավան գյուղական համայնքները և Արարատ քաղաքային համայնքը,

- «Արարատ-8» Արալեզ, Գինեվետ, Գոռավան, Դաշտաքար, Լուսառատ, Նոր ուղի, Նոր կյանք, Սիսավան, Վանաշեն, Տափերական գյուղական համայնքները և Վեդի քաղաքը,

- «Արարատ-9» Ջանգակատուն, Պարույր Սևակ, Տիգրանաշեն, Լանջառ, Լուսաշող, Վարդաշատ, Ուրցաձոր (ա.թ. Շաղափ և Լանջանիստ բնակավայրեր), Ուրցալանջ գյուղական համայնքները:

Արարատի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերլուծությունները կատարվել են նախագծի դրույթներին համապատասխան, հաշվի առնելով ծրագրում ներառված համայնքների 2017-2021 թթ. զարգացման ծրագրերը: Արարատ, Վեդի քաղաքներում և մյուս գյուղական համայնքների զարգացման ծրագրերում նշված և նկարագրված են առկա հիմնախնդիրները, որոնք վերաբերվում են՝ սոցիալ-կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների ոլորտներին:

Նախագծվող տարածքը Արարատյան հարթավայրի կիսաանապատային լանդշաֆտային գոտի է՝ անապատների և մշակովի հողի տեղամասերով, որոնք ձևավորվել են մարդու հազարամյա ագրոմշակութային գործունեության արդյունքում: Անապատային և կիսաանապատային լանդշաֆտի բնական տեղամասեր մնացել են միայն անջրդի տարածություններում, ոռոգման ջրանցքների շուրջ չմշակվող տարածքներում, արոտավայրերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում և ջրաճահճային էկոհամակարգերում:



Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Արարատյան հարթավայրի հյուսիսային մասը, որն ընդգրկում է Քասախ, Հրազդան և Վեդի գետերի ավազանները, հանդիսանում է Հայաստանի հիմնական գյուղատնտեսական շրջանը, որտեղ հողերի աղակալման և ճահճացման պահճառով հարթավայրի ավելի քան քառորդ մասը գյուղատնտեսական նպատակներով չի օգտագործվում: Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի պատճառ է հանդիսացել խոնավ աղուտային մարգագետինների առկայությունը: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այսպես կոչված “չալաների” հողեր: Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

Արարատի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծերում ընդգրկված համայնքները ներառված են Արարատյան ջրավազանային կառավարման տարածքներում, որի մեջ մտնում են հարակից գետերի և փոքր գետակների ավազանները Վեդիի (1129 կմ² Արածոյի գետավազանի հետ միասին) և Ազատի (954 կմ², որի մեջ մտնում են Ազատի գետավազանը՝ 572 կմ² և Ազատ ու Վեդի գետավազանների միջև ընկած տարածքը՝ 382 կմ²) գետավազանները, ընդհանուր կազմելով՝ 4389 կմ²:

Արարատի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է 122801.56 հա տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 114767 մարդ: Ծրագրի ազդեցության ենթակա տարածքներում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ, օգտակար հանածոներ և գեղատեսիլ, տեսարժան վայրեր, որոնք նպաստավոր են զբոսաշրջության զարգացման համար:

Ներկա իրավիճակում տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են՝ այգեգործությունը, գինու և կոնյակի արտադրությունը, ցեմենտի արտադրությունը, առևտուրը, խաղողագործությունը, մեղվաբուծությունը, անասնապահությունը, հողագործությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը: Արարատ քաղաքային համայնքում բնակչության մեծ մասը ներգրավված է ցեմենտի արտադրության ոլորտում:

Ծրագրում ընդգրկված Արարատի տարածաշրջանի համայնքների սոցիալական միջավայրի և շրջակա միջավայրի վրա տեխնաձին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն՝ արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն՝ արտադրական հոսքաջրերով և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը՝ կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, ինչը էներգետիկ ճգնաժամի տարիներին հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող բնական գործոններից են սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

Ներկայումս Ծրագրի ազդեցության ենթակա համայնքներում մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով: Արդյունաբերական արտանետումները բոլոր աղբյուրներից ընդհանուր հաշվարկով են 1501.4 տ/տարի, որից Արարատ քաղաքում՝ 1369.3 տ/տարի, Վեդի քաղաքում՝ 3.39 տ/տարի, իսկ մնացած համայնքներում գումարային՝ 118.69 տ/տարի:

Արարատի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ ներառված համայնքներում արդյունաբերությունը հիմնականում զարգացած է Արարատ և Վեդի քաղաքներում (Արարատ-7-ում և Արարատ-8-ում): Արարատ քաղաքում գործում են ցեմենտի

գործարանը, ոսկու արդյունահանման ֆաբրիկան, գինու և կոնյակի գործարանները և այլ փոքր ձեռնարկություններ, որոնք ներկայումս գործում են պլանային արտադրողականության՝ 5-10%-ի սահմաններում: Համայնքներում ֆոնային աղտոտվածության մակարդակն աղտոտող բոլոր նյութերով զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ)՝ բացառությամբ Արարատ քաղաքի:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդի բազմամյա չափումների արդյունքները /որոնք իրականացվել են «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգ» ՊՈԱԿ կողմից/ ցույց են տվել, որ կախված մասնիկների /անօրգանական փոշի/ առավելագույն կոնցենտրացիան 2.5 անգամ գերազանցում է անօրգանական փոշու թույլատրելի նորմերը /ՍԹԿ/, ինչի համար Ծրագիրը ներառում է լրացուցիչ միջոցառումների նախատեսում. որոնք կնպաստեն փոշու արտանետումների նվազեցմանը:

Արարատի ոսկու արդյունահանման ֆաբրիկան գտնվում է Արարատ քաղաքից 2.0 կմ և ոսկու արդյունահանման ֆաբրիկայի բանավանից 3.4 կմ հեռավորությունների վրա: Պոչամբարը ֆաբրիկայից գտնվում է 6 կմ հեռավորության վրա: Համաձայն ֆաբրիկայի համար մշակված վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագծային տեղեկատվության (2015թ.), ֆաբրիկայից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում աղտոտող նյութերի առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները ինչպես արտհրապարակում, այնպես էլ բնակելի գոտում գտնվում են նորմերի սահմաններում: Մթնոլորտի աղտոտվածության մակարդակը բանավանում առանց ֆոնի կազմում է՝ $0.0000008 \div 0.066$ ՍԹԿ միավոր, իսկ ֆոնի հաշվառմամբ՝ $0.0000008 \div 0.425$ ՍԹԿ միավոր:

Տարածքի համալիր գնահատականը վերլուծվել է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ: Ցեմենտի գործարանի ազդեցությունը տարածվում է Արարատ քաղաքի (Արարատ-7) և Վեդի քաղաքի (Արարատ-8) տարածաշրջանների վրա: Անտրոպոգեն ազդեցության գոտին այս համայնքների համար համարվում է վտանգավոր, իսկ համալիր գնահատականը՝ սահմանափակ բարենպաստ: Մյուս համայնքների համար անտրոպոգեն ազդեցության գոտին հիգիենիկ իրավիճակով վտանգ չի ներկայացնում, տարածքի համալիր գնահատականը համարվում է բարենպաստ:

Հեռանկարում բոլոր ձեռնարկությունների համար նախատեսված է 5-10% արտադրողականության աճ, այդ ցուցանիշի դեպքում տարածքի համալիր գնահատականը ևս կլինի բարենպաստ:

Ծրագրով ընդգրկված տարածքները գտնվում են Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում: Ներկայումս գետերի աղտոտվածության հիմնական պատճառ է հանդիսանում ՄՄՀՏՊՓ ընդգրկված բնակավայրերի տնտեսակենցաղային հոսքաջրերը, որոնք առանց մաքրվելու թափվում են գետավազանների մեջ՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ: Վերջին տարիներին Վեդի գետի կիրճում սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը: Համաձայն գետերում ջրի որակի աղտոտվածության մակարդակի գնահատման ցուցանիշների, ներկա պայմաններում ՄՄՀՏՊՓ Արարատ-7-ում և Արարատ-8-ում ներառված բնակավայրերի սահմաններում բացառվում է գետերի օգտագործումը ռեկրեակցիոն նպատակով:

Ծրագիրը նախատեսում է նշված համայնքների համար հեռանկարում կառուցել կեղտաջրերի մաքրման կայաններ: Արարատ, Վեդի քաղաքների և գյուղերի աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս Արարատի ամբողջ տարածաշրջանի համար մեկ միասնական կեղտաջրերի մաքրման կայանի նախատեսում: Գյուղական համայնքներում տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար նախատեսված է տեղադրել



տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայան. ինչը կապահովի 98% մաքրման արդյունավետություն և կունենա բազմաստիճանային մաքրման կառուցվածք, սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, պարզարան, և այլ կառույցներ:

Ստորև բերված են տարածքային պլանավորման նախագծով նախատեսված Արարատ-7,8,9 տարածքների հողերի առկա և հեռանկարային նպատակային նշանակության փոփոխությունները:

Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափի միավոր	Ելակետային	Առաջնահերթ	Հեռանկարային
Տարածքը (ընդամենը), այդ թվում՝	հազ. հա	122793,644	122793,644	122793,644
ցյուղատնտեսական նշանակության հողեր (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, խոտհարքներ, արոտավայրեր և այլ հողատեսքեր)	հազ. հա	91117,71	90417,24	90374,17
բնակավայրերի հողեր	հազ. հա	4142,55	4231,19	4260,70
արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	հազ. հա	1676,41	2266,41	2268,89
էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	հազ. հա	419,30	433,00	434,68
հատուկ պահպանվող տարածքների հողեր	հազ. հա	21632,55	21650,00	21659,38
հատուկ նշանակության հողեր	հազ. հա	237,89	237,89	237,89
անտառային հողեր	հազ. հա	303,67	303,67	303,67
ջրային հողեր	հազ. հա	3263,56	3254,25	3254,25

Հողերի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում ավտոտրանսպորտի, արդյունադերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները, ինչպես նաև արդյունաբերական և կենցաղային թափոնների կազմակերպված և չկազմակերպված աղբյուրները:

Ծրագրով նախատեսված նոր արդյունաբերական ձեռնարկությունների և հասարակական շինությունների կառուցումը և գործարկումը չեն հանգեցնի հողի դեգրադացման և աղտոտման: Մթնոլորտ արտանետվող փոշին իր մեջ չի պարունակի ծանր մետաղների տարրեր, հողն աղտոտող բաղադրիչների կոնցետրացիաները չեն գերազանցի սահմանային-թույլատրելի նորմերը:

Արարատի մարզում առկա են մի շարք օգտակար հանածոների շահագործված և շահագործվող հանքավայրեր, որոնց խախտված տարածքները ենթակա են ռեկուլտիվացման/վերականգնման: Նախագծով նախատեսված հեռանկարային ժամանակահատվածում նախատեսված է վերականգնել այդ տարածքները:

Հողի աղտոտման կանխարգելման և էռոզիայից պահպանման միջոցառումների շարքին է դասվում նաև համայնքային տարածքների կանաչապատումը, թափոնների կառավարումը և այլն:

Համայնքներում առաջացած կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) ընդհանուր տարեկան քանակը /99550 բնակչության թվի համար/ ներկա իրավիճակում կազմում է 24887.5 տ/տարի: Հեռանկարում Արարատի տարածաշրջանի համայնքներում բնակչության թիվը կկազմի 103.202 հազ.մարդ, կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) ընդհանուր քանակը կկազմի՝ 25800 տ/տարի:

Արդյունաբերական թափոնները /ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ/ բացակայում են կամ ենթակա են երկրորդական օգտագործման: Ոչ օգտագործելի թափոնների քանակը կազմում է 45.67 տ/տարի:



Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի թափոնների ցանկում ներառված են տարբեր վտանգավորության դասերի պատկանող նյութեր, որոնց տարեկան քանակները կազմում են 195 տոննա/տարի: Այդ թափոնների հեռացումը և տեղադրումն իրականացվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ծրագրի իրականացման տարածքում վտանգավոր քիմիական թափոնների գործածությունը բացակայում է, օրգանական ծագման թափոնները /ոչ վարակիչ և վարակիչ/ Արարատ-7-ում կազմում են՝ 0.34 տ/տարի, Արարատ-8-ում՝ 0.23 տ/տարի, Արարատ-9-ում՝ 0.045 տ/տարի: Այս թափոնները վնասագերծման նպատակով հանձնվում են լիցենզավորված կազակերպությունների:

ՄՄՀՏՊՓ ներառված բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 4031.5հա մակերես, որից Արարատ-7-ում՝ 1670հա, Արարատ-8-ում՝ 1683հա, իսկ Արարատ-9-ում՝ 677.12հա: Համայնքներում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը կազմում է 34: Ներկայումս աղբահանությունը կատարվում է անկանոն, աղբը մշտապես ենթարկվում է ինքնայրման: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքները խիստ աղտոտված են, ժամանակավոր աղբավայրը ենթակա է կոնսերվացման:

Նախագծով նախատեսված է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպապատել և բարեկարգել: Աղբահանությունը կատարել կազմակերպված ձևով, աղբավայրերը ծածկել հողով՝ մինչև բոլոր համայնքների համար աղբավերամշակման գործարանի նախագծումը և կառուցումը:


Արարատի տարածաշրջանի համայնքներում, մոտ 58 հա տարածքում առկա են 34 գերեզմանոցներ, որոնք գործող են: Արարատ քաղաքում ներկայումս գործում է 2 գերեզմանոց, որոնց համար սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերով: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախագծով նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում, իսկ գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում՝ տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Ներկա դրությամբ Արարատի տարածաշրջանի համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը կազմում է 20.18 հա /որից գյուղական համայնքներում՝ 14.56 հա/, իսկ սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը՝ 3100 հա: Գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը հեռանկարում կկազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար՝ 10 մ²/մարդ:

Արարատի տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղին բացակայում է: Գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր հեղեղումներից պաշտպանելու նպատակով բոլոր համայնքերի համար նախագծով առաջարկվում է հեղեղատար առուների նախագծում և կառուցում, հաշվի առնելով տարվա ընթացքում անձրևաջրերի քանակը /տեղումների տարեկան քանակը կազմում է 252 մմ, բնակավայրերի տարածքի մակերեսը՝ 4255.49 հա/: Հեղեղային ձորակների, ինչպես նաև սողանքային երևույթների տարածումը բնորոշ է հիմնականում Արարատ-9-ի բնակավայրերին: Բնակավայրերի տարածքները անբարենպաստ և վտանգավոր բնական երևույթներից պաշտպանելու նպատակով նախատեսվում է հեղեղատարների կառուցում, որից Արարատ-7-ում՝ 1090մ երկարությամբ Արմաշ բնակավայրում, Արարատ-8-ում՝ 750մ երկարությամբ Դաշտաքարում և 750 մ Տափերականում, իսկ Արարատ-9-ում՝ 12450մ ընդհանուր երկարությամբ Զանգակատուն, Լանջանիստ, Լանջառ, Լուսաշող, Ծաղափ, Ուրցաձոր և Վարդաշատ գյուղերում:

Նախագծով նախատեսվում է նաև Արարատ-9 բնակավայրերի /Զանգակատուն, Լանջառ, Լուսաշող, Ուրցալանջ, Ուրցաձոր համայնքի Ուրցաձոր և Լանջանիստ/



տարածքներում իրականացնել հակասողանքային միջոցառումներ: Սողանքավտանգ տարածքների մակերեսը կազմում է 946.7 հա:

Արարատի տարածաշրջանում որոշակի տարածում ունեն նաև ճահճացած տարածքները, որոնց մակերեսները Արարատ-7-ում /Արարատ և Երասխ գյուղերում/ ընդամենը կազմում են 12.46հա, իսկ Արարատ-9-ում /Լանջանիստ և Ուրցածոր գյուղերում/ 0.82 հա:

Համայնքների տարածքային զարգացման համար առաջնահերթ ընտրվել են այնպիսի ուղղություններ, որոնց համար ներդրումները նպաստավոր կլինեն տարբեր ոլորտների զարգացման համար և կխթանեն.

- արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպմանը,
- շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,
- ինժեներական ենթակառուցվածի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացմանը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը:
- միջպետական Մ2 և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգմանը, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայմանը և կազմակերպմանը,

Տարածաշրջանում, նախագծային ժամանակաշրջանում շրջակա միջավայրի պահպանության, բնապահպանական իրավիճակի բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար ծրագրով նախատեսված առաջնահերթ և հեռանկարային միջոցառումների շարքում ներառված են.

- Վեդի գետի վրա 32.3 մլն/մ³ ծավալով ջրամբարի կառուցումը, ինչը կթեթևացնի Սևանա լճի բեռնվածությունը 18 մլն. մ³ –ով,
- գյուղատնտեսական բարձրակ և անտառային հողերի, բնապահպանական հատուկ պահպանվող տարածքների օգտագործման բացառումը,
- Ճահճացած տարածքների չորացումը /մոտ 12 հա/,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների վերականգնումը,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- կոյուրու համակարգերի բարելավումը,
- համայնքներում ոռոգման ցանցի արդիականացումը և բարելավումը,
- սանիտարական գոտիների պահպանմամբ աղբավայրերի նախատեսումը,
- անձրևաջրերի հեռացման համակարգի կառուցումը,
- գետեր թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի համար կենսաբանական մաքրման կայանի կառուցումը,
- Արարատի ցեմենտի գործարանի համար լրացուցիչ միջոցառումների կիրառումը /արդիական ֆիլտրի կիրառում/, որոնք կնպաստեն փոշու արտանետումների նվազեցմանը,
- տարածաշրջանում մսի վերամշակման արտադրամասի կազմակերպումը (սպանդանոցի կառուցում),
- համայնքների տարածքում աղբահանման կետերի կազմակերպումը, ժամանակակից պահանջներին համապատասխան աղբավերամշակման գործարանի կառուցումը,
- ճանապարհի եզրերին, հանգստի գոտիներում կենսապատման իրականացումը,



- մեքենաների տեխնիկական վիճակի վերահսկողության սահմանումը ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման նպատակով:

Փորձաքննական եզրահանգումներ. Արարատի մարզի Արարատ և Վեդի քաղաքների և հարակից համայնքների տարածքային քաղաքաշինական լուծումների առաջարկման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները: Քանի որ նախագծով նախատեսված միջոցառումներն իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված տարածքներում, հետևաբար նախագծված համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, իսկ բուսատեսակներին և կենդանատեսակներին հասցվող վնասը՝ նվազագույն:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունները, բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱԳ հաշվետվությունը լրամշակվել է: Ծրագրի ազդեցության ենթակա համայնքների հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է գնահատման և փորձաքննական գործընթացներին:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայնախագիծ» ԲԲԸ կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատի տարածաշրջանի (Արարատ-7, Արարատ-8, Արարատ-9) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքային պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ուղղակի գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ

Հ. Մկրտչյան

